ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Երվանդ Օտյանի անվան թիվ 7 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ

(1-ին հանրային քննարկում)

ք. Էջմիածին ***10.10.2025թ.***

2025թ. հոկտեմբերի 10-ին ժամը 11:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ք. Էմիածին, Մ.Մաշտոցի 0 շենք) տեղի ունեցավ Վաղարշապատ քաղաքի Երվանդ Օտյանի անվան թիվ 7 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար: Հանրային քննարկմանը մասնակցել են Երվանդ Օտյանի անվան թիվ 7 հիմնական դպրոցի տնօրենը, Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակիցներ, նախաձեռնող և ՇՄԱԳ իրականացնող ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև բնակիչներ:

Նախագծի ներկայացում և քննարկում

Բացման խոսքով հանդես եկավ համայնքի տնտեսական ծրագրերի պատասխանատու՝ Մարիամ Զաքարյանը, ողջունեց հանդիպման մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը՝ նշելով, որ այսօր տեղի է ունենում Վաղարշապատ քաղաքի Երվանդ Օտյանի անվան թիվ 7 հիմնական դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՇՄԱԳ առաջին հանրային քննարկումը, որի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է հանրության ծանուցում:

Այնուհետև նախագծի մանրամասները և բնապահպանական հարցերը ներկայանելու նպատակով նա խոսքը փոխանցեց բնապահպանության մասնագետ Քրիստինե Սահակյանին:

Ք. Սահակյանը մանրամասնեց, որ Վաղարշապատ քաղաքի Երվանդ Օտյանի անվան թիվ 7 հիմնական դպրոցի կառուցման պատվիրատուն ՀՀ քաղաքաշինության կոմիտեն է, որի նախագծային աշխատանքներն իրականացվել են «Օն-Դիզայն» ՍՊԸ-ի կողմից: Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի, ինչպես նաև Պատվիրատուի պահանջների համաձայն:

Նշվեց, որ դպրոցը նախագծվել է որպես հիմնական դպրոց՝ 650 աշակերտի համար: Նախագծման ընթացքում հաշվի է առնվել գոյություն ունեցող նորակառույց մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքի առկայությունը և դպրոցի նոր շենքի նախագիծը հարմարեցվել է վերը նշված նորակառույց մասնաշենքի տեղադիրքի հետ:

Նոր դպրոցի շենքը նախատեսված է եռահարկ, բաղկացած 3 մասնաշենքերից, այն ունի նաև նկուղային հարկ: Շենքում նախատեսված են հետևյալ սենքերը. 12 տարրական ուսուցման դասարան, 16 միջին ուսուցման դասարան: Առկա են լեզվի և ինֆորմատիկայի ուսուցման դասարաններ, գրադարան, ֆիզիկայի, քիմիայի կաբինետներ՝ իրենց օժանդակ սենյակներով, հոգեբանի և լոգոպետի սենյակներ, ռազմագիտության կաբինետ՝ իր պահեստով, ճաշարան՝ իր խոհանոցային մասով:

Տարրական և միջին դասարանները տեղակայված են դպրոցի եզրային մասերում և տարանջատված են ոչ միայն մասնաշենքերով, այլ նաև իրենց դիրքով և մուտքերով:

Միջին հատվածում ադմինիտրատիվ և ընդհանուր օգտագործման սենքերն են, իսկ գոյություն ունեցող սպորտային և հանդիսությունների դահլիճները միացվել են միջին մասում տեղակայված ընդհանուր միջանցքին:

Դպրոցի կոնստրուկտիվ մասը նախատեսվում է իրականացնել սյուն-հեծանային միաձույլ երկաթբետոնյա կոնստրուկցիաներիով, արտաքին պատերը թեթև բետոնյա մեկ շարք բլոկներից, ջերմամեկուսացված և երեսապատված կերամոգրանիտե սալերով, տանիքը հարթ է, որի վրա տեղակայված է ֆոտովոլտային կայան 30կվտ, 60 հատ և արևային ջրատաքացուցիչներ 2մ^2 հատ:

Դպրոցի նոր շենքի կառուցապատման մակերեսը կազմում է մոտ 2100 ք.մ.: Բոլոր հարկերի գումարային ընդհանուր մակերեսը (ծածկի սալի արտաքին եզրագծով բոլոր հարկերը միասին) միասին կազմում է մոտ 5100 ք.մ:

Մուտքը նախատեսվում է Վ. Սարգսյան փողոցից:

Դպրոցի շենքն ապահովված է անհարժեշտ բոլոր պայմաններով հաշմանդամների և բնակչության այլ սակավաշարժուն խմբերի (ԲՍԽ) կենսագործունեության ապահովման համար: Հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժան նպատակով շենքը համալրված է թեքուղիներով և վերելակով:

Նախատեսվող շինության էներգախնայողության և էներգաարդյունավետության ուղղությամբ լուծումները նախատեսում են համալիր միջոցառումներ երեսպատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների և վիտրաժների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ:

Այնուհետև Ք. Սահակյանն անդրադարձավ նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված ուսումնասիրություններին: Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները: Շինարարության ընթացքում հիմնականում ակնկալվող բացասական ազդեցությունները և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումները ամփոփված են բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլանում (ԲԿՄՊ), որը հանդիսանալու է Կապալառուի փաստաթղթերի անբաժանելի մաս: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում ամփոփված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ

առաջարկվող միջոցառումները: Նա նշեց, որ բնապահպանական կառավարման պլանում ամփոփված միջոցառումները Կապալառուի համար պարտադիր իրականացման ենթակա միջացառումներ են և Կապալառուն պետք է խստորեն հետևի ԲԿՄՊ-ով նախատեսված բնապահպանական մեղմացման միջոցառումների իրականացմանը:

Ք. Սահակյանը նշեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա, սակայն որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր.՝ փոշի, աղմուկ, շինարարական և կենցաղային աղբ), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի: Նա հավելեց, որ հողատարածքի մնացած հատվածը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Նախատեսվում է ունենալ կանաչապատ բակային տարածք, որը նախատեսվում է կանաչապատել տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են մի շարք դրական ազդեցություններ, մասնավորապես.

- ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում,
- դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշվիվ բարեկարգ և ժամանակակից բացօդյա մարզահրապարակների,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքն ու ուսումնական գործընթացի կազմակերպումն անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

Մասանկցիների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

Հարց 1. Վ. Հայրապետյան, դպրոցի տնօրեն – Արդյո՞ք նախակրթարանը ներառված է նախագծի մեջ:

Պատասխան 1. Վահան Սարգսյան, Օն Դիզայն ՍՊԸ – Նախակրթարանը արդեն իսկ ներառված է, նախատեսված է առանձին մուտք և 2 դասասենյակ՝ յուրաքանչյուրը նախատեսված 25-ից 30 սաների համար:

Հարց 2. Վ. Հայրապետյան, դպրոցի տնօրեն – Արդյո՞ք ճաշարանից բացի բուֆետ ևս նախատեսված է:

Պատասխան 2. Վահան Սարգսյան, Օն Դիզայն ՍՊԸ – Բուֆետ նախատեսված չէ, ավագ դասարանները նույնպես կարող են օգտվել ճաշարանից: Կան ազատ տարածքներ, որտեղ կարելի է լրացուցիչ սնունդ վաճառել:

Հարց 3. Վ. Հայրապետյան, դպրոցի տնօրեն – Արդյո՞ք դպրոցի համար նախատեսված է թաքստոց:

Պատասխան 3. Վահան Սարգսյան, Օն Դիզայն ՍՊԸ – Թաքստոց նախատեսված է, որը ապահովված է լինելու վերելակով, երեք սանհանգույցով:

Հարց 4. Վ. Հայրապետյան, դպրոցի տնօրեն – Արդյո՞ք դպրոցի տարածքի պարսպապատում նախատեսված է:

Պատասխան 4. Վահան Սարգսյան, Օն Դիզայն ՍՊԸ – Դպրոցի ողջ տարածքը լինելու է ցանկապատված և առանձնացված, պատերի առկայության դեպքում կիրականացվեն երեսապատման, վերանորոգման աշխատանքներ:

Հանդիպումն ամփոփեց համայնքի տնտեսական ծրագրերի պատասխանատու՝ Մարիամ Զաքարյանը՝ շնորհակալություն հայտնելով մասնակիցներին և նշելով, որ մոտակա ավագանու նիստին այս հարցը կդրվի ավագանու քննարկմանը:

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով:

Քննարկման վարող և պատասխանատու՝ Մարիամ Զաքարյան,
Վարդաշատի
համայնքապետարանի
տնտեսական ծրագրերի
պատասխանատու

Նախաձեռող՝ Վլադիմիր Իսպիրյան,
«Օն Դիզայն» ՍՊԸ, տնօրեն